6. Վեցերորդ տողում որ Կիսարբ(ա) վախճանեալ Ջալ կարդացել է՝ որ վախճանեցաւ ի Կեսարիայ, որով ստացվում է, իբրև թե Աբասը մեռել է Կեսարիա քաղաքում և ոչ թե կեսարեայ (երիտասարդ հասակում)։

7. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ», մասն առաջին, էջ 15, անունը գրել է Նանա, իսկ ծանոթության մեջ նույն էջում գրում է. «Բայց իշխանուհու անունն է այդտեղ (քարի վրա)» Անանե(նեի) դուստր... և այլն։

Վիմ այս արձանագրությունը գրել է 1187 թվականի տակ, թեև նրա աղբյուրը Ջալ-ն է, որ անթվական է թողել։ Մյուս հրատարակիչներն էլ անթվական են թողել և չեն էլ որոշել ժամանակը հավանականության սահմաններում։ Վիմ-ի առաջարկած 1187 թվականը միանգամայն անընդունելի է, որովհետև այդ ժամանակ Աբասը, որի մահվանից հետո նրա հիշատակին է կառուցվել կամուրջը, և կանգնեցվել խաչքարը, դեռևս կենդանի էր և նույնիսկ չէր ամուսնացել։ Նա ամուսնացել է 17 տարեկան հասակում և 2 տարի հետո էլ 19 տարեկան մեռել է, նշանակում է, նա, ինչպես ճիշտ են որոշել, 1190 թվականին ամուսնացել է և 1192 թվականին էլ մեռել։ Դրանից հետո է, որ նրա կին Վանենին իր վաղամեռիկ ամուսնու հիշատակին շինել է տվել այդ կամուրջը (տես Աշ, Անձ. Բռ, հտ. I, էջ 4, Մով, էջ 71—74)։

Առավել անհավանական է Սանահնի կամուրջի 1234 թվականին կառուցված լինելը, որ ընդունել են Վ. Հարությունյանը և Ս. Սաֆարյանը իրենց միասին կազմած Памятники армянского зодчества, գրքի 56 էջում, որ լույս է տեսել Մոսկվայում 1951 թ.։ Հավանաբար նրանք օգտվել են նույն սխալ աղբյուրներից, ինչից օգտվել է Հ. Եղիազարյանն իր «Ալավերդու շրջանի կուլտուրայի հուշարձանները ուղեցույց» գրքի համար (էջ 17), որ լույս է տեսել Երևանում 1952 թվին։ Անկասկած է, որ Վանենին կամուրջը կառուցել է իր ամուսնու հիշատակին, նրա մահվանից հետո անմիջապես և ոչ թե 42 տարի անց։

ԺԴ. Վիմական արձանագրություններ, որոնք չենք տեսել տեղում և մեջ ենք բերում ուրիշների հրատարակություններից։

179. Ս. Գրիգոր եկեղեցու պատին բարձրուս, որ ընկնում է նախագավթի տանիքի մեջ։ Տեղն այժմ փակ է եվ արձանագրությունը չի երևում։ Մեջ ենք բերում Ղրիմեցուց

Հ ՇԺԲ Մ 1063

Հրատարակված է՝ Ջալ 32—33, Ղրիմ 49, Հար 299, Վիմ 24, Մով 48—49

«Ի ՇԺԲ թուին հայոց, ի հայրապետութեանն տեառն Դիոսկորոսի, ի թագաւորութեանն Կիւրիկէի եւ Սմբատայ, ես Հրանուշ թագուհի՝ դուստր Դաւթի արքայի, շինեցի զնշխարատունս եւ զեկեղեցիս. եւ ետու զնորաշէնքս ի Սանահինս վասն իմ մեղաց թողութեանն եւ իմ եղբարցն արեշատութեան։ Արդ, առաջնորդ որ նստի ի Սանահնիս, պարտական է առաջի Աստուծոյ, որ յիմ եկեղեցիս ժամ ինձ առնէ։ Եւ եթէ ոք զնորաշէնքն ի Սանահնէս հանէ, կամ զիմ ժամն խափանէ, ի փառաց սբ երրորդութեանն եւ յերեք սբ ժողովոյն նզովեալ լիցի անլուծանելի»։

Ծանոթություն.— Այս արձանագրությունը գրաբարանի և ս. Գրիգոր եկեղեցու շինությանն է վերաբերում։